Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 14.1/[159110]-13

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱ-ՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ա. Ղազարյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ
Ժ. Կարաասլանյան	«Լույս» հիմնադրամի կրթական ծրագրի տնօրեն
Վ. Քոչարյան	Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ
Հ. Գրիգորյան	«Այ Փի Էս Սի» ընկերության տնօրեն, սոցիոլոգ, ԵՊՀ-ի դասախոս
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական Վարչության պետ
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետի պաշտոնակատար

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրենի ընտրություն (մրցույթի մասնակիցների փաստաթղթերի քննարկում, հարցազրույցի անցկացում, քվեարկության անցկացում և որոշման կայացում)

(Ա. Միրզախանյան, Ա. Ղազարյան, Ժ. Կարաասլանյան, Ա. Աշոտյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթի արդյունքները.

2) «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների կողմ ձայների մեծամասնությամբ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրենի թափուր պաշտոնում ընտրել Ռուբեն Թոփչյանի թեկնածությունը.

3) հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանին՝

ա. սահմանել հսկողություն և խստագույնս պահպանել ՀՀ իրավական ակտերի (օրենքների, ենթաօրենսդրական ակտերի նախագծերի) մշակման համար սահմանվող ժամկետները՝ բացառելով դրանց ժամկետային ուշացումները,

բ. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հաստիքների գծով հայտարարվելիք մրցույթներում համապատասխան մասնագետների թեկնածությունների առաջադրումն ապահովելու նպատակով առաջիկա 5 տարվա ընթացքում մասնագիտական կրթության որակի ապահովման ոլորտում ձևավորել կադրային (նոր սերնդի) կարողություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ